



## **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ ԸԻԴ 1775/02/12թ.  
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան  
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան  
Հ.Աբրահամյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ 1775/02/12թ.

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

15-ին հունվարի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)  
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր                      Վ.Հովսեփյանի  
մասնակցությամբ դատավորներ՝            Ս.Հայրապետյանի  
    Գ.Արզումանյանի

դռնբաց դատական նիստում քննելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության ընդդեմ Կառլեն Ալեքսանդրի Չիթչյանի և Վրեժ Ալեքսանդրի Հովսեփյանի՝ դրամական միջոցներ բռնագանձելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ պատասխանողների ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի վճռաբեկ բողոքը,

### **Պ Ա Ր Չ Ե Ց**

#### **1.Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ Բյուրո) խնդրել է Կառլեն Ալեքսանդրի Չիթչյանից և Վրեժ Ալեքսանդրի Հովսեփյանից համապարտության կարգով բռնագանձել 914.940 (ինը հարյուր տասնչորս հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 872.000 ՀՀ դրամը ավտոմեքենային պատճառված և Բյուրոյի կողմից հատուցված վնասի, 25.000 ՀՀ դրամը պատճառված վնասի չափը պարզելու նպատակով նշանակված փորձաքննության համար Բյուրոյի կողմից

վճարված գումարի, 17.490 ՀՀ դրամը Բյուրոյի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարի չափերն են:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 2013թ. հուլիսի 19-ի վճռով հայցը մերժվել է:

Վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել երրորդ անձ Անդրանիկ Ռազմիկի Ավագյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2013թ. հոկտեմբերի 31-ի որոշմամբ նշված վերաքննիչ բողոքը բավարարվել է, վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել՝ Բյուրոյի հայցը բավարարվել է:

Սույն գործով 2013թ. նոյեմբերի 29-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանողների ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

2013թ. դեկտեմբերի 16-ին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել երրորդ անձ Ա.Ավագյանի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 47-րդ հոդվածի 2-րդ մասի, 49-րդ և 50-րդ հոդվածների պահանջները, ճիշտ գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին, ճիշտ չի մեկնաբանել օրենքը, որի պատճառով էլ բեկանել և փոփոխել է Դատարանի վճիռը:

Բողոքի հեղինակը իր դիրքորոշումը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն առանց ուշադրության արժանացնելու Դատարանի վճռում կատարված հիմնավորումները և վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները, հիմնավոր է համարել Բյուրոյի կողմից կատարված փոխհատուցումը: Հաշվի չի առել, որ մինչև փոխհատուցում կատարելը, Բյուրոն կատարել է միայն մի փորձաքննություն՝ վնասի չափը որոշելու համար, և հակառակ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ վնաս պատճառելու մեջ վարորդների մեղավորության աստիճանը պարզելու համար փորձաքննություն չի նշանակել, այլ բավարարվել է միայն ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի 1-ին ջոկի ավագ տեսուչ Ա.Սահակյանի կողմից կազմված և իր իսկ կողմից հաստատված եզրակացությամբ, որում իրավական գնահատական է տրված միայն բեռնատար ավտոմեքենայի վարորդի գործողություններին, իսկ մարդատար մեքենայի վարորդ Անդրանիկ Ավագյանի գործողություններին ընդհանրապես չի անդրադարձված: Եզրակացությունում որոշված չէ երկու վարորդների մեղավորության աստիճանը: Ստորադաս դատարանն անտեսել է, որ Վրեժ Հովսեփյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ ավտոմեքենան ապահովագրված չլինելու համար, այլ ոչ թե ճանապարհային երթևեկության կանոնների այլ խախտման համար: Նշել է, որ Վրեժ Հովսեփյանին վարչական պատասխանատվության ենթարկվելու որոշումը չի ապացուցում նրա մեղքը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշումը անհիմն է, կայացված է դատավարական և նյութական իրավունքի նորմերի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը, ինչն էլ պատասխանողների համար առաջացրել է ծանր հետևանքներ: Գտնում է, որ սույն գործով Գերագույն դատարանի որոշումը

կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, քանի որ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել օրենքի դրույթները:

Խնդրել է բավարարել վճռաբեկ բողոքը, բեկանել Վերաքննիչ դատարանի 2013թ. հոկտեմբերի 31-ի որոշումը, փոփոխել այն, կայացնելով նոր դատական ակտ՝ հայցապահանջը մերժելու մասին, կամ գործը վերադարձնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Դատարանի կողմից նշանակված դատաավտոտեխնիկական փորձաքննության եզրակացությունը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի 26.11.2010թ. թիվ 27-լ որոշմամբ հաստատված «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետի որակավորման, նրանց հետ կնքվող պայմանագրի գրանցման և ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննության» RL 1-014 կանոնների և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթների ուժով չի համապատասխանում ապացույցների թույլատրելիության չափորոշիչին, քանի որ օրենքի ուժով այն կազմած ԼՂՀ արդարադատության նախարարության դատափորձաքննությունների լաբորատորիան ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնելուն լիազորված չէ և Բյուրոյի կողմից որակավորված փորձագետ չի հանդիսանում:

Գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումները Վերաքննիչ դատարանը թույլ չի տվել ու խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ԼՂՀ ԿԱ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի 1-ին ջոկի ավագ տեսուչ Ա. Մահակյանի 2012թ. օգոստոսի 21-ի եզրակացության համաձայն՝ 2012թ. օգոստոսի 19-ին, Հաղրութ-Դրախտիկ-Ստեփանակերտ ավտոճանապարհի 24-րդ կիլոմետրում, Վ. Հովսեփյանի վարման տակ գտնվող ԳԱԶ 53-12 մակնիշի 29 LS 376 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել հանդիպակած գոտի և բախվել Ա. Ավագյանի վարման տակ գտնվող ԲՄՎ 525 մակնիշի 24 SO 339 պետհամարանիշի ավտոմեքենային: ԲՄՎ 525 մակնիշի ավտոմեքենան ապահովագրված է, ԳԱԶ 53-12 մակնիշի ավտոմեքենան ապահովագրված չէ: Վարորդները, համաձայն ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 124.6 հոդվածի 2-րդ մասի, համաձայնության չեն եկել և պահանջել են իրականացնել ՃՏՊ-ի վերաբերյալ վարչական վարույթ: ՃՏՊ-ի հետևանքով մարմնական վնասվածք ոչ ոք չի ստացել:

Նշված եզրակացության եզրափակիչ մասի 2-րդ կետում նշված է՝ «ԳԱԶ 53-12 մակնիշի 29 LS 376 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Վրեժ Ալեքսանդրի Հովսեփյանին ենթարկել վարչական պատասխանատվության ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասի և 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով» /հատոր 1, գործ թերթ 12/:

2.ԼՂՀ ԿԱ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի 1-ին ջոկի տեսուչ Դ.Ղահրիյանի ՆԿ N 109723 արձանագրության հիման վրա 2012թ. օգոստոսի 21-ին կայացրած որոշմամբ «ՃԵԿ-ի ԱՊՊԱ կետի պահանջը խախտելու համար» ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Վրեժ Հովսեփյանը ենթարկվել է տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով /հատոր 1, գործ թերթ 82/:

3.Բյուրոյի 2012թ. սեպտեմբերի 11-ի N ՀԵ/12-126 եզրակացության՝ կատարված փորձաքննությունների բաժնում նշված է, որ պատահարի պատճառների փորձաքննություն է իրականացվել 19.08.2012թ-ից 21.08.2012թ. ընկած ժամանակահատվածում, և փորձագետի եզրակացությունը հետևյալն է. «Ավտովարորդ Վ.Հովսեփյանը խախտել է ՃԵԿ-ի պահանջները, ինչով **պայմանավորել է վթարի առաջացումը**» /հատոր 1, գործ թերթ 27-28/:

4.ԳԱԶ 53-12 մակնիշի 29 LS 376 պետհամարանիշի ավտոմեքենան, ըստ SQ 010243 տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի, պատկանում է Կառլեն Ալեքսանդրի Զիթյանին: ԲՄՎ 525 մակնիշի 24 SO 339 պետհամարանիշի ավտոմեքենան, ըստ SC 085485 տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատկանում է Ավետիկ Սիրեկանի Ոսկանյանին:

5.Բյուրոյի գործադիր տնօրենի 2012թ. սեպտեմբերի 12-ի N 12/184 հատուցում վճարելու մասին հրամանի համաձայն՝ Բյուրոյի երաշխավորման ֆոնդի միջոցներից Ա.Ոսկանյանին որպես հատուցում հրամանագրվել է վճարել 872.000 ՀՀ դրամ: Նշված գումարը փոխանցվել է Ա.Ավագյանի հաշվին /հատոր 1, գործ թերթ 30-31/:

6.Բյուրոյի 2012թ. նոյեմբերի 6-ի հայցադիմումում նշված է, որ պատահարը տեղի է ունեցել Վրեժ Հովսեփյանի կողմից ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտելու հետևանքով:

7.Դատաքննության ընթացքում Դատարանի կողմից նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն, որը իրականացրել է «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ը: Փորձագետի եզրակացությունից հետևում է, որ ԳԱԶ 53-12 մակնիշի 29 LS 376 պետհամարանիշի և ԲՄՎ 525 մակնիշի 24 SO 339 պետհամարանիշի ավտոմեքենաների վարորդները թույլ են տվել ՃԵԿ-ի կանոնների խախտումներ, դրանով իսկ պայմանավորել տվյալ ընդհարման առաջացումը /հատոր 2, գործ թերթ 49-55/:

8.Գույքին պատճառված վնասի չափը չի վիճարկվել:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է ԼՂՀ Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, ԼՂՀ դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: **Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին:**

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և

առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1) գրավոր և իրեղեն ապացույցներով, 2) փորձագետների եզրակացություններով, 3) վկաների ցուցմունքներով, 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով: Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ հանրահայտ հանգամանքներն ապացուցման կարիք չունեն: Նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վերոգրյալ դատավարական նորմերից հետևում է, որ գործով ապացույցներ են օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնք հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով: Ավելին, դատարանը, ելնելով գործի առանձնահատկություններից, ինչպես նաև գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից, առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, դրանց շրջանակը: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից: Հետևաբար, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը: Դատարանի կողմից վերը նշված դատավարական նորմերով իրականացվող գործողությունները պետք է ուղղված լինեն ապացույցների բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը:

Սույն գործով ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի 1-ին ջոկի ավագ տեսուչ Ա.Սահակյանի եզրակացության համաձայն՝ ԳԱԶ 53-12 մակնիշի ավտոմեքենայի վարորդ Վրեժ Հովսեփյանը ենթակա էր վարչական պատասխանատվության ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասի և 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով: ԲՄՎ 525 մակնիշի ավտոմեքենայի վարորդ Անդրանիկ Ավագյանի գործողությունների վերաբերյալ եզրակացությունում գնահատականը բացակայում է:

ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելու համար, որի հետևանքով առաջացել է ճանապարհատրանսպորտային պատահար, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ: Նույն օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ ԼՂՀ տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելու համար:

ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի 1-ին ջոկի տեսուչ Դ.Ղահրիյանի կայացրած որոշման համաձայն՝ Վրեժ Հովսեփյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները խախտելու համար:

Բյուրոյի եզրակացությունում նշված է, որ պատահարի պատճառների փորձաքննություն է իրականացվել 19.08.2012թ-ից մինչև 21.08.2012թ., և փորձագետի եզրակացությունը հետևյալն է. «Ավտովարորդ Վ.Հովսեփյանը խախտել է ՃԵԿ-ի պահանջները, ինչով պայմանավորել է վթարի առաջացումը»:

Հայցադիմումում նշվել է, որ պատահարը տեղի է ունեցել Վ.Հովսեփյանի կողմից ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտելու հետևանքով: Որպես հիմք նշվել է ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ-ի վերը նշված եզրակացությունը:

Դատաքննության ընթացքում, պատասխանողների միջնորդությամբ, Դատարանը նշանակել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն, որի եզրակացությունից հետևում է, որ ԳԱԶ 53-12 մակնիշի ավտոմեքենայի և ԲՄՎ 525 մակնիշի ավտոմեքենայի վարորդները թույլ են տվել ՃԵԿ-ի կանոնների խախտումներ, դրանով իսկ պայմանավորել տվյալ ընդհարման առաջացումը:

Դատարանը, 2013թ. հուլիսի 19-ի վճռով մերժելով հայցը, նշել է, որ սույն գործում առկա ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի 1-ին ջոկի ավագ տեսուչ Ա.Սահակյանի 2012թ. օգոստոսի 21-ի եզրակացությունը «չի կարող համարվել որպես ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից տրված», քանի որ այն վերադաս հրամանատարի անունից հաստատել է ավագ տեսուչ Ա.Սահակյանը, ով նման լիազորությամբ օժտված չէր:

Վճռում նշվել է նաև, որ Դատարանը քննադատելի է վերաբերվում ԳԱԶ 53-12 մակնիշի ավտոմեքենայի վարորդի գործողությունների վերաբերյալ դատաավտոտեխնիկական փորձաքննության եզրակացությանը և անհիմն է համարվել փորձագետի եզրահանգումը բեռնատարի վարորդի կողմից ՃԵԿ-ի

կանոնները խախտելու վերաբերյալ: Դատարանը եկել է այն եզրահանգման, որ «ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել զուտ ԲՄՎ 525 մակնիշի ավտոմեքենանայի վարորդ Անդրանիկ Ավագյանի մեղքով, որը թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ և 67-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ», քանի որ նա ունեցել է արգելակելու և ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ «ԱՊՊԱ օրենքն ու նրանից բխող իրավանորմերը հստակորեն սահմանել են այն չափորոշիչները, որոնց հիման վրա կատարված գնահատումը պետք է հիմք ընդունել՝ գույքին պատճառված վնասների մեջ մեղավոր անձին որոշելու համար»: Վերլուծության ենթարկելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ և 27-րդ հոդվածների դրույթները, Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրակացության, որ «...վնաս պատճառած անձի և վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ / ... / նկատմամբ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի /սուբրոգացիայի/ իրավունք ունենալու մասին վկայող՝ տեղի ունեցած ապահովագրական պատահարում անձի մեղավորության մասին թույլատրելի ապացույց կարող է համարվել **միայն** ԱՊՊԱ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով՝ Բյուրոյի կողմից որակավորված փորձագետի, տվյալ դեպքում **ճանապարհային երթևեկության անվտանգության համար պատասխանատու պետական մարմնի տված եզրակացությունը**: ... Դատարանի կողմից դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չկար, իսկ դրա արդյունքում ստացված եզրակացությունը, միանշանակ, պետք է դիտվեր անթույլատրելի ապացույց»:

Վերաքննիչ դատարանի նշված վերլուծությունները և հետևությունները չեն բխում գործի նյութերից, անհիմն են ու հակասական, իսկ կայացված դատական ակտը՝ բեկանման ենթակա, ելնելով հետևյալից.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) ... դիմումը ստանալուց հետո ... պարտավոր է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, ինչպես նաև սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերի:...Եթե ըստ ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և ապահովագրական ընկերության (Բյուրոյի)՝ փորձագետի եզրակացությունը պարզ կամ ամբողջական չէ, ապա նրանք ... իրավունք ունեն փոխադարձ համաձայնությամբ նշանակելու լրացուցիչ փորձաքննության անցկացում: ... Եթե ապահովադիրը, ապահովագրված անձը, տուժողը (նրա իրավահաջորդը) կամ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) համաձայն չէ սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված կարգով անցկացված փորձաքննության արդյունքներին, ապա նա ... իրավունք ունի պահանջելու կրկնակի փորձաքննության անցկացում: Կրկնակի փորձաքննությունն անցկացվում է այն անցկացնելու պահանջ ներկայացրած անձի միջոցների հաշվին: Միևնույն ապահովագրական պատահարի սահմաններում սույն օրենքով նախատեսված կրկնակի փորձաքննության պահանջ կարող է ներկայացվել միայն մեկ անգամ: ... Կրկնակի փորձաքննության

անցկացումից հետո լրացուցիչ փորձաքննություն նշանակվել չի կարող, և կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով:

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի 26.11.2010թ. թիվ 27-L որոշմամբ հաստատված RL 1-014 կանոնների 8-րդ կետի համաձայն՝ ստանդարտ հատուցման գործընթացում որակավորված փորձագետ են համարվում ճանապարհային երթևեկության անվտանգության համար պատասխանատու պետական մարմինը, քրեական հետապնդման մարմինները ... կամ փարձագիտական կազմակերպությունը...:

Նշված կանոններից հետևում է, որ Բյուրոն ստանդարտ հատուցման գործընթացում որակավորված փորձագետ է համարում ճանապարհային երթևեկության անվտանգության համար պատասխանատու պետական մարմին և քրեական հետապնդման մարմիններին՝ մեղավորության հարցը որոշելու համար: Հետևաբար, ճանապարհային երթևեկության անվտանգության համար պատասխանատու պետական մարմնի կամ քրեական հետապնդման մարմինների **համապատասխան** որոշումը հնարավորություն է տալիս ապահովագրական ընկերությանը կամ Բյուրոյին այն ընդունել որպես հիմք՝ հատուցում կատարելու համար:

Միևնույն ժամանակ, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածը նախատեսում է, որ փորձագետի եզրակացությունը պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում կարող է նշանակվել լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից **հետադարձ պահանջի /սուբրոգացիայի/** իրավունք ձեռք բերելու դեպքերը:

Սուբրոգացիայի կանոնները նախատեսված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածով, որի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադիրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) **պահանջի իրավունքը** վնասը պատճառած անձի նկատմամբ **անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:** ... Ապահովագրողն իրեն անցած **պահանջի իրավունքն իրականացնում է ապահովադրի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:**

Մեջբերված նորմերից հետևում է, որ ապահովագրողը հատուցված գումարի մասով և չափով ստանում է վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքը: Ընդ որում, ապահովագրողը պահանջի իրավունքն իրականացնում է ապահովադրի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ: Այսինքն, նման հարաբերությունները կարգավորվում են վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները կարգավորող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներով, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի և այլ գործող իրավական ակտերով: Դա բխում է նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի դրույթներից:



Գերագույն դատարանը նպատակահարմար է գտնում նշել, որ տվյալ պարագայում տեղի է ունենում անձերի փոխարինում պարտավորություններում՝ ապահովագրողը փոխարինում է ապահովադրին (ապահովագրված անձին) նրա պահանջներում վնասների համար պատասխանատու անձի հանդեպ: Ապահովադիրը իր իրավունքները փոխանցում է ապահովագրողին այն նույն ծավալով, որով կարող էին իրականացվել իր իսկ կողմից: Իսկ **ապահովագրողը մինչև հատուցում վճարելը պետք է իրականացնի համապատասխան ստուգումներ**՝ այդ թվում նաև վնասը պատճառած անձին պարզելու համար: Ընդ որում, ապահովագրության պայմանագրով կարող է բացառվել սուբրոգացիայի իրավունքը:

Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանի վճռում տեղ գտած վերը նշված վերլուծությունները և հետևությունները նույնպես անհիմն են ու հակասական, քանի որ չեն բխում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումից: Ուստի սույն քաղաքացիական գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Նոր քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք Բյուրոյի կողմից ներկայացված և դատական նիստում հետազոտված ապացույցներով հաստատված է, որ տվյալ ճանապահատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել միայն ԳԱԶ 53-12 մակնիշի ավտոմեքենայի վարորդ Վրեժ Հովսեփյանի կողմից թույլ տված խախտումների արդյունքում, և արդյոք առկա են անհրաժեշտ իրավական հիմքերը՝ պահանջվող չափով հայցը բավարարելու համար: Գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության արդյունքում պատասխանելով նշված հարցերին, հնարավոր կլինի ճիշտ որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ գործով դատաքննությունը տարվել է հայցվորի և երրորդ անձ Ա.Ավագյանի բացակայությամբ, որոնց ցուցմունքները կարևոր նշանակություն ունեն գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու համար, ուստի նոր դատաքննության ընթացքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ նշված անձանց մասնակցությունը ապահովելու համար:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քաղաքացիական գործերը քննելիս Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի միջնորդությամբ, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը:

Գերագույն դատարանը արձանագրում է, որ դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր են հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների

պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը: Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների պահանջների խախտումներ, սխալ են մեկնաբանել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ և 27-րդ հոդվածները, չեն կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի դրույթները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը և արձանանգրած դատավարական ու նյութական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Գերագույն դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի միատեսակ կիրառումը, ճիշտ մեկնաբանությունը և նպաստի իրավունքի զարգացմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Պատասխանողներ Կառլեն Չիթչյանի և Վրեժ Հովսեփյանի ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ \_\_\_\_\_ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ \_\_\_\_\_ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

\_\_\_\_\_ Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ